ԿՐԹԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԻՍԿ ԲՈՒՀԵՐՈՒՄ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ 28-Ը

Վրաստանի պետական դպրոցներում 2026-2027 ուսումնական տարին կմեկնարկի սեպտեմբերի 15-ին: Առաջին կիսամյակը ներառում է 74 ուսումնական օր եւ կավարտվի դեկտեմբերի 29-ին: Ձմեռային արձակուրդը կտեւի դեկտեմբերի 30-ից մինչեւ հունվարի 14-ը ներառյալ: Երկրորդ կիսամյակը կսկսվի 2027 թվականի հունվարի 15-ին եւ կավարտվի հունիսի 15-ին: Ուսումնական տարին ավելի շուտ կեզրափակեն առաջին դասարանցիները՝ մայիսի 28-ին, իսկ տասներկուերորդ դասարանի աշակերտները դպրոցը կավարտեն մայիսի 20-ին:

Երկրորդ կիսամյակի ընթացքում աշակերտները կունենան գարնանային արձակուրդ՝ մարտի 8-ից մինչեւ 14-ը ներառյալ, ինչպես նաեւ զատկական արձակուրդ՝ ապրիլի 30-ից մինչեւ մայիսի 4-ը: Աշակերտները չեն սովորի նաեւ պաշտոնական ոչ աշխատանքային օրերին:

Ինչ վերաբերում է մանկապարտեզներին, ուսումնական գործընթացը նախադպրոցական հաստատություններում եւս կվերսկսվի սեպտեմբերի 15-ից:

Ըստ պաշտոնական փաստաթղթերի՝ պետական եւ մասնավոր բուհերում ուսումնական տարվա մեկնարկը նույն օրը չէ. ամսաթվերը տատանվում են սեպտեմբերի սկզբից մինչեւ ամսվա վերջ: Նախքան 2026-2027 ուսումնական տարվա սկիզբը բարձրագույն ուսումնական հաստատությունները աստիճանաբար կներկայացնեն նոր ակադեմիական օրացույցները՝ գրանցման, ուսումնական գործընթացի եւ քննությունների ճշգրիտ ժամանակացույցով:

Ըստ արդեն հրապարակված ակադեմիական օրացույցների՝ նոր ուսումնական տարին սեպտեմբերի 7-ին կսկսվի Ազատ համալսարանում, իսկ Սուլխան-Սաբա Օրբելիանիի անվան ու Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան թատրոնի եւ կինոյի պետական համալսարաններում, Կովկասի միջազգային համալսարանում՝ սեպտեմբերի 14-ին, Թբիլիսիի պետական համալսարանում (ԹՊՀ), Իլիայի պետական համալսարանում (Իլիաունի), ինչպես նաեւ Թբիլիսիի պետական բժշկական համալսարանում, Սուխումիի պետական համալսարանում, Բիզնեսի եւ տեխնոլոգիայի համալսարանում (BTU)՝ սեպտեմբերի 21-ին, Վրաստանի միջազգային համալսարանում (GIU)՝ սեպտեմբերի 28-ին:

Այլ բուհերի ակադեմիական օրացույցներին կարելի է ծանոթանալ հաստատությունների պաշտոնական կայքէջերում:

ԱՌԱՋԻՆ, ՅՈԹԵՐՈՐԴ ԵՎ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԿԱՇՄԱՆԱՓԱԿՎԻ ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիվի Միքանաձեի հայտարարությամբ՝ 2026-2027 ուսումնական տարին կմեկնարկի դպրոցական համազգեստի եւ այլ կարեւոր բաղադրիչների ներդրմամբ:

Դպրոցներում առաջին, յոթերորդ եւ տասներորդ դասարանների աշակերտները կսկսվորեն բոլորովին նոր դասագրքերով ու ծրագրերով: Հումանիտար եւ ՍՏԵՄ(բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա) ուղղությունների դասագրքերը շատ բարձր մակարդակի են:

- Ներդրվում է նոր կանոնակարգ, որը սահմանափակում է բջջային սարքերի օգտագործումը, որպեսզի երեխաներն առավելագույնս կենտրոնացված լինեն ուսումնական գործընթացի վրա,-նշում է նախարարը:

ԳՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ



ՄԻՔԱՅԵԼ ԱԽՏՅԱՆ

(1938-2016)

Ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ Միքայել Ախտյանը ծնվել է Վրաստանի Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Դաղեթ-Խաչեն գյուղում: Ավարտել է Լենինգրադի թեթեւ արդյունաբերության տեխնիկումը, այնուհետեւ՝ Մոսկվայի թեթեւ արդյունաբերության ինստիտուտը (հեռակա ուսուցմամբ): Ապրել եւ ստեղծագործել է Թբիլիսիում ու Երեւանում:

Միքայել Ախտյանը չափածո 19 գրքի հեղինակ է: Հանդիսացել է ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի Գրողների միությունների անդամ: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, վրացերեն եւ ուկրաիներեն:

Նշանակալի է Միքայել Ախտյանի ավանդը հայ-վրացական գրական կապերի զարգացման եւ ամրապնդման գործում: Նրա թարգմանությամբ հայերեն են հրատարակվել վրացի անվանի գրողներ Գենո Կալանդիայի, Մուրման Լեբանիձեի եւ Դավիթ Մճեդլուրիի ստեղծագործությունները:

ՉԱՅՆԵՑԵ'Ք, ՍԱՐԵՐ

Խաշամների տակ երազն է քնում,
Այն ո՞վ է սարում դողդոջ ձեռքերով
Իր ճերմա՜կ, ճերմա՜կ սփռոցը փռում:
Քունս չի տանում,
Աչքերիս առջեւ ձիս է հրեղեն,
Մեր տնակը հին,
Որ կարոտի պես ծգում է իրեն:
Խաշամները չոր չեն քնում ինձ պես
Նրանց տակ միայն երազն է քնում,
Ի՞նչ ասես սրտին, երբ նրա ներսում
Բոցն է բռնկվել, հուրը կարոտի:
Չայնեցե'ք, սարեր, սիգապանծ սարեր,
Պատասխան տվեք իմ այրվող սրտին՝
Մայրս չի՞ արդյոք սփռոցն այդ փռում:
Խոսեցե'ք, սարեր, ինչո՞ւ եք լռում,
Չեր լանջը ասես մեր այգին է հին,
Ուր առաջվա պես մայրս պիտի հանի
Հնձանից գինին...
Խաշամների տակ երազն է քնում,
Քունս չի տանում...
Ա՜խ, ինչ-որ մեկը հեռու սարերում
Մի ճերմա՜կ, ճերմա՜կ սփռոց է փռում:

ՀՐԱՇՔ ՊԱՏԱՀԵՐ

Հրաշք պատահեր
Ինչ կորցրել եմ՝ գտնեի նորից,
Մանուշակ փնջած
Ելնեի խաղաղ Խրամի ձորից:
Չքե շորն հագիդ
Ես քեզ տեսնեի ձորի պռնկին,
Փունջս մեկնեի,
Դու չվերցնեիր՝ պղտորվեր հոգիս:
Ինչ էլ ասեի՝
Մերժեիր, խրտնած եղնիկի պես խենթ
Ինձնից փախչեիր
Ու ես վազեի, վազեի քեզ հետ...
Հրաշք պատահեր
Ողջը կրկնվեր իմ ծնված օրից,
Մանուշակ փնջած
Ելնեի խաղաղ Խրամի ձորից...

ՄԱՐԻՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ - ՄՈՍԵՍՈՎԱ

Մերօրյա շնորհալի բանաստեղծուհի Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան ծնվել է 1955 թվականին Թբիլիսիում: Ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի ռուսաց լեզվի եւ գրականության ֆակուլտետը:

Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան քնարական 10 ժողովածուի հեղինակ է. նրա բանաստեղծությունները հաճախ տպագրվում են տարբեր երկրների գրական մամուլում: 2007 թվականին Թբիլիսիում անվանի բանաստեղծ եւ թարգմանիչ Արա Արթյանի թարգմանությամբ լույս է տեսել նրա «Սրտի ուղեծիր» հայերեն ժողովածուն, որի կազմողն ու խմբագիրն է բարեհիշատակ բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը:

Բանաստեղծուհին անդամակցում է Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությանն ու ռուսալեզու գրողների «Արիոն» ընկերությանը:

ԽԱԲՈՒՍԻԿ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իմ պատանության հեքիաթների մեջ
Հրաշք էր կյանքս, ցնորք ու երազ,
Հիմա վազում է տարին օրվա հետ՝
Դատարկ ձանձրույթը փռելով վրաս:

Ես թափառում եմ կյանքի խավարում՝
Հոգուս մեջ հույսը թաքցրած հազիվ,
Բայց համոզված եմ՝ փոշի է կյանքը,
Երջանկությունը՝ դժբախտաբար միֆ:

Թեթեւ կծաղրի, իսկ հետո, հետո
Քեզ թողած մենակ դատարկ խավարում,
Հանկարծ կհալվի մեծ գիշերվա մեջ,
Ինչպես մեղրի մի կաթիլը ջրում:

Թարգմանությունը՝ Արա Արթյանի, 2007թ.

ԹԲԻԼԻՍԻ

Քաղաք կա հողում հին Իվերիայի,
Որ հինն ու նորը իր մեջ է առել,
Ինձ համար ասես՝ մարգարիտ լինի՝
Մայիսյան չքնաղ լուսայգին վայել:

Օրը՝ բյուրեղյա, ջուրը՝ մեղրի պես,
Հողը՝ ծածկված քնքշությամբ ծաղկանց:
Եվ ոգին այստեղ անհոգ է այնպես,
Երգ ու տաղեր են խոսքերը մարդկանց:

Այստեղ սիրով են փայփայում, պահում
Հողի ամեն մի կտորը անգին,
Այստեղ անծնուրաց սերն է հար ծաղկում,
Գալաթեա է այստեղ ամեն կին:

Եվ Թբիլիսին՝ հոգու դուռը բաց,
Թռչնի պես ազատ ու բարձրաթռիչ,
Նորից է ծնվում բախտի աստղի տակ,
Որ երկնքի հետ միանան ընդմիշտ:

Թարգմանությունը՝ Ռուզան Հովասափյանի, 2026թ.

Էջը պատրաստեց՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԵՑԻԿ ԿԱԶՄՎԱԾՔԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Եթե լսես դիետալոգներին, ապա գեղեցիկ կազմվածքը պահպանելու համար հարկ է հրաժարվել բավական մեծ թվով, կենսական անհրաժեշտ մթերքներից: Եթե այդպես վարվես, գեղեցիկ կազմվածքը պահպանելու փոխարեն, առողջության հետ կապված լուրջ հիմնախնդիրների հետ կընդհարվես: Ինչպե՞ս վարվել:

Ս.ՄԽԻԹԱՐՅԱՆ
Թբիլիսի

Սննդաբաններն ասում են, որ կազմվածքի գեղեցկության համար պետք է հրաժարվել ընդամենը 4 մթերքից՝ կարագից, ռաֆինացված հացամթերքից, աղից ու շաքարից: Ըստ Ֆլորիդայի ինստիտուտի գիտնականների՝ կարագը պետք է սննդաբաժնից բացառվի չհագեցած ճարպերի մեծ քանակի պատճառով: Մասնագետները կարծում են, որ այն լիովին հնարավոր է փոխարինել ձեթով: Մթերքների հաջորդ խմբի մեջ մտնում են սպիտակ հացը, մակարոնեղենը եւ բուլկիները: Սպիտակ հացի փոխարեն, կարելի է օգտագործել թեփով հաց, մակարոնեղենից գնել միայն ցորենի պինդ տեսակներից պատրաստվածը, իսկ բուլկիները փոխարինել որեւէ այլ ավելի օգտակար աղանդերով: Վերջին երկուսը աղն ու շաքարն են, առանց որոնց դժվար է պատկերացնել ժամանակակից կյանքը: Բայց այստեղ նույնպես խնդիրը միանգամայն լուծելի է: Թեյը կարելի է քաղցրացնել օգտակար մեղրով, իսկ կերակուրների մեջ համեմունքներ ավելացնել: Աղից եւ քաղցրից կարելի է հետ վարժվել՝ աստիճանաբար պակասեցնելով աղի պտղունցներն ու թեյին ավելացվող շաքարավազի գդալները:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ը՝ ՀԱՅՈՑ ՆԱՎԱՍԱՐԴ 2026-Ը ԲՈՒՆ ՀԱՅՈՑ 4519 ԹՎԱԿԱՆՆ Է

Լսել եմ, որ մեր ժողովուրդը, հին աշխարհի մի քանի ժողովուրդների օրինակով, իր օրայույցն է ունեցել, ըստ որի՝ տարվա սկիզբը համարվել է օգոստոսի 11-ը: Եթե հնարավոր է հակիրճ ներկայացրեք հայոց օրայույցը:

Վ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բաթումի

Հին հայերի համար օգոստոսի 11-ը (հնում՝ Նավասարդի 1) համարվում էր Նոր տարվա սկիզբը: Այդ օրը սկսվում է Նավասարդ ամիսը: Նավասարդը հենց ստուգաբանվում է որպես «Նոր տարի» (հին հնդկերենում՝ «նավասարատա», պարսկերեն՝ «նավասարհատու»): Հավանաբար, Նավասարդ անվանումը ժառանգվել է պարսկական տիրապետության շրջանում, իսկ ավելի վաղ գոյություն ուներ Ամանոր հայկական Նոր տարին, որի տոնակատարությունը նշվում էր գարնանը՝ Բարեկենդան տոնի հետ: Զարգացման հաջորդ փուլում Ամանորը տեղափոխվել է Նավասարդի 1 (օգոստոսի 11): Մինչ Ամանորի տոն դառնալը ժողովրդի կենցաղում Նավասարդը կար՝ որպես աշնանային բերքահավաքի տոն: Ըստ ավանդության՝ Հայկ նահապետը սպանել էր Բելին, ինչը, հայոց հին տարեգրության համաձայն, տեղի է ունեցել մ.թ.ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Ըստ անվանի լեզվաբան, պատմաբան, քերական Միքայել Չամչյանի (Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ) «ժամանակագրական աղյուսակի»՝ Հայկի եւ Բելի ընդհարումը տեղի է ունեցել մ.թ.ա. 2107թ.: Հաղթելով Բելին, Հայկը հիմնադրում է հայոց երկիրը՝ անվանելով այն Հայք: Բաբելոնացի Բելի եւ Հայկի զորքերի բախումը տեղի է ունեցել «Աղի լճի», այսինքն՝ Վանա ծովակի մոտ, մի գավառում, որն այնուհետեւ կոչվեց Հայոց Ձոր:

2026 թվականի առաջին կեսը համապատասխանում է Բուն Հայոց 4518 թվականի վերջնամասին, իսկ երկրորդ կեսը՝ 4519 թվականի սկզբին: Բուն Հայոց թվականը հաշվվում է մ.թ.ա. 2492 թվականից: Օգոստոսի 10-ին ավարտվում է 4518-ը եւ սկսվում է 4519-ը:

Հայկական օրացույցային տարին պարունակում էր 365 օր, այսինքն՝ արեւադարձային տարուց (իրական տարուց) 1/4 օրով պակաս: Չորս տարվա մեջ դա կազմում էր մեկ օր, իսկ արեւադարձային 1460 տարի անց տարեսկիզբը վերականգնում էր իր դիրքը: Հայերն այդպիսի տարիներն անվանել են «նահանջից-նահանջ», իսկ 1460-ամյա պարբերաշրջանը՝ «Հայկյան շրջան» կամ «Հայկական շրջան»: Հայկյան երկրորդ շրջանը վերջացել է մ.թ. 428թ. (երբ Նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ի հետ):

ՀՐԱՏԱՊ

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԿԱՅԵԼ ԱՄՌԱՆ ՇՈԳԻՆ

Ամառային եղանակը մարդու օրգանիզմի վրա իր բարերար դրական ազդեցության հետ մեկտեղ, կարող է առաջացնել նաեւ առողջական վիճակի տարաբնույթ խանգարումներ, հատկապես, երբ օդի ջերմաստիճանը գերազանցում է մարդու նորմալ կենսագործունեությունը ապահովող միջին ջերմաստիճանային ցուցանիշը:

Շոգ եղանակին մարդու օրգանիզմի վրա առավել մեծ ազդեցություն ունեցող հիմնական բացասական գործոններն են օդի բարձր ջերմաստիճանը եւ ուլտրամանուշակագույն ճառագայթումը:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման հիմնական աղբյուրն արեւի ճառագայթումն է: Քիչ քանակով այն կարեւոր նշանակություն ունի մարդու կենսագործունեության համար, սակայն մեծ քանակով երկարատեւ ազդեցությունը համարվում է վտանգավոր եւ մարդու առողջության վրա կարող է ունենալ խիստ բացասական հետեւանքներ:

Օդի բարձր ջերմաստիճանը կարող է առաջացնել լուրջ անհարմարություններ, ինչպես նաեւ առողջական խնդիրներ: Ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց, բարձրանում է նաեւ մարդու օրգանիզմի ջերմակարգավորող համակարգի ծանրաբեռնվածությունը: Իր կենսագործունեության համար անհրաժեշտ հաստատուն ջերմաստիճանն ապահովելու համար ստիպված շատ ավելի ինտենսիվ են աշխատում օրգանիզմի մի շարք օրգան-համակարգեր, հատկապես սրտանոթային եւ շնչառական համակարգերը, ինչի արդյունքում առաջանում են գործունեության խանգարումներ: Բարձր ջերմաստիճանը բացասաբար է ազդում նաեւ կենտրոնական նյարդային համակարգի վրա:

Ջերմաստիճանի բարձրացման եւ ուլտրամանուշակագույն ճառագայթման բացասական ազդեցությունը մեղմելու, օրգանիզմի անցանկալի գերտաքացումը մեղմելու կամ կանխելու, ինչպես նաեւ մրսածությունից խուսափելու համար անհրաժեշտ է պահպանել հետեւյալ պարզ կանոնները.

* խուսափել արեւի ուղիղ ճառագայթներից՝ հատկապես ժամը 12:00-17:00 ընթացքում չընդունել արեւային լոգանք,

* հնարավորինս պաշտպանվել ուլտրամանուշակագույն ճառագայթումից՝ կրելով գլխարկ, արեւային ակնոց, հովանոց, հագնել սպիտակ կամ բաց երանգների ազատ, օդաթափանց, ցանկալի է բամբակյա կտորից հագուստ,

* օգտագործել սովորականից շատ հեղուկներ (օրական մոտ 3 լիտր), հատկապես ջուր, թան, առանց շաքարի բնական հյութեր եւ թեյ: Մեծ քանակությամբ աղերի ու կենսաբանական ակտիվ նյութերի շնորհիվ սառը հանքային ջուրը թարմացնում եւ անցկացնում է հոգնածությունը: Թանն իր մեջ պարունակող օրգանական բթուղների, սպիտակուցների եւ աղերի շնորհիվ ծարավը հագեցնելու հրաշալի միջոց է: Բնական հյութերից ամռանը նախապատվությունը տվեք լոլիկի, թուրինջի, բալի, սալորի եւ հոնի հյութերին: Թեյը եւս լավ միջոց է շոգ եղանակին ծարավը հագեցնելու համար, սակայն թեյը պետք է լինի առանց շաքարի, ոչ թունդ եւ ցանկալի է կանաչ:

* ցանկալի է հրաժարվել կծու, յուղոտ կերակուրներից, նախընտրել ավելի թեթեւ, դյուրամարս սնունդ, օգտագործել շատ մրգեր եւ հում բանջարեղեն,

* օգտագործվող հեղուկները պետք է լինեն գոլ կամ մի փոքր հովացրած, այսպես դրանք ավելի լավ են հագեցնում ծարավը, չի կարելի հեղուկները շատ սառեցնել,

* չչարաշահել կոֆեին եւ շաքար պարունակող ըմպելիքները՝ թե' տաք, թե' սառը վիճակում,

* արգելվում է գտնվել չօդափոխվող կամ վատ օդափոխվող տարածքներում, երկար ժամանակ մնալ արեւի տակ կայանված փոխադրամիջոցներում, երեխաներին թողնել փակ պատուհաններով ավտոմեքենաներում,

* ցանկալի է, որպեսզի երեխաները, հղիները, ծերերը, խրոնիկ հիվանդություններով տառապող անձինք ցերեկային ամենաշոգ ժամերին քնեն կամ պառկեն, քանի որ պառկած դիրքում հեշտանում է ջերմատվությունը եւ արյան շրջանառությունը,

* անհրաժեշտ է ամենօրյա աշխատանքները կատարել օրվա համեմատաբար զով ժամերին, ցերեկային ամենաշոգ ժամերին խուսափել բացօթյա տարածքում ծանր ֆիզիկական աշխատանքից,

* պետք է հետեւել, որպեսզի օդափոխիչը կամ օդորակիչն ապահովի օդափոխությունը, սակայն սառը օդի ուժեղ հոսանքն ուղղված չլինի անմիջապես մարդկանց վրա,

* այն տարածքներում, որտեղ առկա են օդորակիչներ, անհրաժեշտ է հագնվել ջերմաստիճանին համապատասխան:

* արգելել երեխաներին լողանալ դեկորատիվ ջրավազաններում, քանի որ վերջինները նախատեսված չեն լողի համար, չունեն համապատասխան կառուցվածք՝ ջուրը մաքրելու համար: Լող չկազմակերպել նաեւ գետերի, լճակների աղտոտված ափերով եւ ջրով (եթե առկա են աղբակույտեր կամ սննդի օբյեկտներ, որոնց կեղտաջրերը բաց են թողնվում գետերի, լճակների ջրի մեջ կամ ջուրը ճահճացած է) հատվածներում:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

☞ *Ամեն մարդ էլ սխալվում է, բայց միայն հիմարն է պնդում իր սխալը:*

ՑԻՑԵՐՈՆ

☞ *Իմաստունը հիմարից տարբերվում է միայն նրանով, որ իմաստունը գիտի, որ ինքը ոչինչ չգիտի, իսկ հիմարը դա չգիտի:*

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

☞ *Ամբողջ բարոյականության հիմքը կարեկցանքն է:*

ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ

☞ *Նա, ով ամուսնանում է հարստության համար, վաճառում է իր ազատությունը:*

ՀԵՐԲԵՐՏ

☞ *Լավ ընտանիքն այն է, ուր ամուսինն ու կինը ցերեկը մոռանում են, որ իրենք սիրեկաններ են, իսկ գիշերը մոռանում են, որ ամուսիններ են:*

ՌՈՍՏԱՆ

☞ *Կինն ընտանիքի փրկությունն է կամ կործանումը:*

ԱՄԻԵԼ

☞ *Ոչ ոք չի կարող գաղտնիքը պահել ավելի լավ, քան նա, ով դրա մասին տեղեկություն չունի:*

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող
Մառնեուլի



ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 9-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իններորդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացմանը ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Ապա կայացավ պատգամավորների՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված պարտականությունները բարեխղճորեն կատարելու երդման եւ երդման տեքստի ստորագրման արարողությունը:

Պատգամավորների գրանցումից խորհրդարանը ձեռնամուխ եղավ Ազգային ժողովի նախագահի ընտրությանը: Ազգային ժողովը՝ 63 կողմ, 28 դեմ ձայներով խորհրդարանի նախագահ ընտրեց խորհրդարանում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արուսյակ Մանավազյանի կողմից առաջադրված միակ թեկնածու՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ռուբեն Ռուբինյանին: Ընդ որում, 36-ամյա Ռուբեն Ռուբինյանը աշխարհի խորհրդարանների ամենաերիտասարդ նախագահն է:

Խորհրդարանը կունենա երեք փոխնախագահ (մեկը՝ ընդդիմադիր խմբակցության պատգամավորների կազմից), 12 (աշխատանքի եւ բարեկեցության, առողջապահության, արտաքին հարաբերությունների, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ սփյուռքի, Եվրոպական ինտեգրման, մարդու իրավունքների պաշտպանության, պաշտպանության եւ անվտանգության, պետական իրավական, տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման, տարածքային կառավարման եւ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, ֆինանսական եւ բյուջետային հարցերի) մշտական հանձնաժողով:

Ազգային ժողովի իններորդ գումարման երեք խմբակցություններն ընտրել են իրենց ղեկավարներին եւ քարտուղարներին՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար է ընտրվել Արուսյակ Մանավազյանը, խմբակցության քարտուղար՝ Վոլոդյա Հակոբյանը, «Ուժեղ Հայաստան» խմբակցությունը կղեկավարի Նարեկ Կարապետյանը, իսկ խմբակցության քարտուղարի պաշտոնը կզբաղեցնի Տիգրան Աբրահամյանը, «Հայաստան» խմբակցության ղեկավար է ընտրվել Աննա Գրիգորյանը, քարտուղար՝ Արթուր Խաչատրյանը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վարչապետի պաշտոնում նշանակվելուց հետո Նիկոլ Փաշինյանը ելույթ ունեցավ Ազգային ժողովում:

Օգոստոսի 2-ին կայացավ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը:

Նշենք, որ վարչապետի նշանակումից հետո կառավարությունը պետք է կազմավորվի 15 օրվա ընթացքում: Վարչապետի նշանակումից հետո, հնգօրյա ժամկետում, Հայաստանի նախագահը ներկայացնում է փոխվարչապետերի եւ նախարարների թեկնածուներին, իսկ նախագահը նրանց նշանակում է երեք օրվա ընթացքում կամ դիմում Սահմանադրական դատարան:

Կառավարության կազմավորումից հետո վարչապետը, 20-օրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում կառավարության ծրագիրը: Խորհրդարանն այն քննարկում եւ հավանության է արժանացնում յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ, այսինքն՝ առնվազն 53 ձայնով:

Հիշեցնենք, որ հունիսի 7-ին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, իններորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված կլինի երեք քաղաքական ուժ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կունենա 64, «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 29, իսկ «Հայաստան» դաշինքը՝ 12 մանդատ:

ԱՄՆ-Ի, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԿԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ՀԵՏ

Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայաստանը եւ Ադրբեջանը համատեղ հայտարարություն են արել Սպիտակ տանը 2025-ի օգոստոսի 8-ին կայացած խաղաղության գագաթնաժողովի մեկամյա տարեդարձի կապակցությամբ:

Հայտարարության մեջ ասված է, որ, մեկ տարի առաջ, նախագահ Թրամփը Սպիտակ տանը հյուրընկալեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի մասնակցությամբ պատմական գագաթնաժողով, որի ընթացքում վարչապետ Փաշինյանը եւ նախագահ Ալիեւը ստորագրեցին խաղաղության համատեղ հռչակագիրը: Երեք առաջնորդների ներկայությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները նախաստորագրեցին «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի նախագիծը:

Համատեղ հռչակագիրը, Միացյալ Նահանգների աջակցությամբ, Հայաստանի եւ Ադրբեջանի համար ապահովեց հստակ ճանապարհային քարտեզ՝ խաղաղությունն ամրապնդելու, բարգավաճման հասնելու եւ գործընկերությունը խորացնելու համար: Այս համարձակ առաջնորդների հանդիպումից ի վեր, մեկ տարվա ընթացքում, երկրները շարունակական հաջողության համար հիմքեր ստեղծեցին:

Միացյալ Նահանգները, Հայաստանը եւ Ադրբեջանը վերահաստատում են իրենց անսասան աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը եւ իրավազորությանը՝ իրենց միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Երեք երկրները շարունակում են հանձնառու մնալ օգոստոսի 8-ի համատեղ հռչակագրի լիարժեք իրականացմանը՝ դրա տառին եւ ոգուն համապատասխան, ինչպես նաեւ տարածաշրջանի բացառիկ տնտեսական ներուժի բացահայտմանը:

Նշենք, որ օգոստոսի 8-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

Դոնալդ Թրամփի հետ հեռախոսազրույցում Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ նախագահին՝ 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում, Սպիտակ տանը «Խաղաղության գագաթնաժողով» հյուրընկալելու եւ Երեւանի ու Բաքվի միջեւ խաղաղության համաձայնագրի հասնելու ջանքերի համար:

Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հեռախոսազրույցում կողմերը նշեցին երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման գործում վերջին մեկ տարվա ընթացքում արձանագրված առաջընթացը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՂՐՂԶՍՏԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Օգոստոսի 6-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ղրղզստան կատարած աշխատանքային այցի շրջանակում, մասնակցեց Չոլպոն-Ատա քաղաքում անցկացված Եվրասիական միջկառավարական խորհրդի նեղ կազմով նիստին:

Հայաստանի վարչապետը, նիստի մասնակից Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Բելառուսի վարչապետերը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախագահ Բակիտժան Սագինտաեւի հետ, քննարկել են Եվրասիական տնտեսական միության շրջանակում տարբեր ուղղություններով համագործակցությանը վերաբերող հարցեր:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Հայաստանի Ազգային ժողովի նախկին նախագահ Ալեն Սիմոնյանը նշանակվել է Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար:

Վարչապետի մեկ այլ որոշմամբ՝ Արմեն Գրիգորյանն ազատվել էր Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից:

ՀՐԱԶԴԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ AI ԳՈՐԾԱՐԱՆ

Հրազդանում պաշտոնապես բացվեց AI գործարանը՝ տարածաշրջանում իր մասշտաբով խոշորագույն տեխնոլոգիական կենտրոններից մեկը. մեկնարկել է խոշոր ներդրումային ծրագրի առաջին փուլը:

«Firebird AI» գործարանի գործունեությունը նոր հնարավորություններ կստեղծի երկրի տնտեսական զարգացման, նոր ներդրումների ներգրավման եւ նոր աշխատատեղերի ստեղծման համար:

AI գործարանի կառուցման ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է 5 մլրդ ԱՄՆ դոլար:

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԴՌՆՓԱԿ ՌԵԺԻՄՈՎ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԵԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԵՎ ՎԵՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 7-ին էջմիածնում սկսվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, ինչպես նաեւ վեց արքեպիսկոպոսի եւ եպիսկոպոսների դռնփակ ռեժիմով դատավարությունը:

Մեղադրյալների թվում են արքեպիսկոպոս Նաթան Հովհաննիսյանը, արքեպիսկոպոս Հայկազուն Նաջարյանը, եպիսկոպոս Մուշեղ Բաբայանը, եպիսկոպոս Լեւոն Հակոբյանը, եպիսկոպոս Մակար Հակոբյանը եւ եպիսկոպոս Վահան Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց կաթողիկոսին մեղադրանք է առաջադրվել Գերագույն հոգեւոր խորհրդի նախագահի պաշտոնում պաշտոնեական լիազորությունների օգտագործման համար՝ դատական մեկ այլ որոշման՝ «հայցով ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին» որոշման կատարմանը խոչընդոտելու նպատակով:

Որպես այդպիսի խոչընդոտ է դիտարկվել Ամենայն Հայոց կաթողիկոսի որոշումը՝ Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ Արման Վոլոդյայի Սարոյանին կարգալույծ եպիսկոպոս ճանաչելու մասին:

Նշենք, որ օգոստոսի 7-ին գործը քննող Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հակոբ Մաուկյանի ինքնաբացարկից հետո՝ Գարեգին Երկրորդ կաթողիկոսի եւ Հայ Առաքելական եկեղեցու վեց բարձրաստիճան հոգեւորականների վերաբերյալ քրեական գործը մակագրվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սերժ Ռուշանյանին:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա փետրվարին Գարեգին Երկրորդ կաթողիկոսի նկատմամբ՝ որպես խափանման միջոց կիրառվել էր բացակայելու արգելքը, որի հետեւանքով արգելվել էր նրա ելքը Հայաստանից:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆ

Աստվածածնի փոխակերպման տոնը կամ ինչպես ժողովրդի շրջանում շատ տարածված է ասել՝ խաղողօրհնեքը՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է: Այս տարի այն կնշվի օգոստոսի 16-ին: Տոնի առիթով Վիրահայոց թեմի եկեղեցիներում կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ, որից հետո կկատարվի խաղողօրհնության կարգ:

Տոնից մեկ շաբաթ առաջ սկսվում է պահքը, իսկ տոնի հաջորդ օրը մեռելոց է՝ Հանգուցյալների հիշատակության օր:

ՖՈՒՏԲՈԼ

ԽՎԻՉԱ ԿՎԱՐԱՑԽԵԼԻԱՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԿՐԿՆԱԿԻ ՍՈՒՊԵՐԳԱՎԱԹԱԿԻՐ

«Պարի Սեն Ժերմեն»-ի 25-ամյա վրացի ֆուտբոլիստ Խվիչա Կվարացխելիան նվաճեց եւս մեկ եվրոպական գավաթ: Օգոստոսի 12-ին Զալցբուրգում կայացած ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթի խաղում փարիզյան ակումբը 2-1 հաշվով հաղթեց անգլիական «Աստոն Վիլլա»-ին:

Կվարացխելիան բացեց խաղի հաշիվը 20-րդ րոպեին: Այս գոլը պատմական էր վրացական ֆուտբոլի համար. Խվիչան դարձավ առաջին վրացի ֆուտբոլիստը, որը գոլ խփեց ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթի խաղում: Այսպիսով, Խվիչա Կվարացխելիան միակ վրաց ֆուտբոլիստն է, ով երկու անգամ անընդմեջ դարձել է Եվրոպայի չեմպիոնների գավաթի եւ Սուպերգավաթի գավաթակիր:

22-ԱՄՅԱ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՎՐԱՑԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՊՈՒԱՐԵԶ

Թբիլիսիի «Իբերիան» Եվրոպայի լիգայի որակավորման երրորդ փուլի պատասխան խաղում 2:1 հաշվով հաղթեց Հյուսիսային Իռլանդիայի ներկայացուցիչ «Լարնին» եւ եվրոգավաթների՝ Կոնֆերենցիաների լիգայի հիմնական փուլում խաղալու իրավունք նվաճեց: Այս թիմերի առաջին հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի՝ 0:0:

Այս հաղթանակով «Իբերիան» դուրս եկավ ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆ եւ միաժամանակ նվաճեց Կոնֆերենցիաների լիգայի հիմնական փուլում խաղալու իրավունք: Վրացական թիմը վերջին անգամ ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարի գլխավոր փուլում խաղացել էր 2004 թվականին, երբ Թբիլիսիի «Դինամոն» հանդես էր եկել ՈՒԵՖԱ-ի գավաթի խմբային փուլում:

Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆում «Իբերիայի» մրցակիցը կլինի լեհական «Յագելոնիան»:

«ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ»-Ն ՊԱՅՔԱՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅՈՒՄ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի որակավորման երրորդ փուլի երկրորդ խաղում Հայաստանի չեմպիոն «Արարատ-Արմենիա»-ն սլովենական «Ցելյե»-ի մենամարտի երկու հանդիպումների արդյունքներով (2:1, 0:2) դուրս մնաց Չեմպիոնների լիգայից եւ պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆ փուլում, որտեղ հայկական ակումբի մրցակիցը կլինի «Կուփս» (Ֆինլանդիա)-«Ունիվերսիդադե Կրայովա» զույգի հաղթողը:

Ինչ վերաբերում է Հայաստանի գավաթակիր ու Սուպերգավաթակիր «Նոա» թիմին, ապա այն ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման երրորդ փուլում երկու հանդիպումների արդյունքներով (2:2, 1:2) զիջեց շվեյցարական «Սիոն» թիմին եւ դուրս մնաց եվրոգավաթների համար պայքարի մրցաշարից:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՂՄՈՒԿԸ ԽԻՍՏ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Վրաստանի ներքին գործերի նախարարը նոր հրաման է արձակել, որով սահմանվել է, թե ինչպես է ոստիկանությունը հատուկ, սերտիֆիկացված դյուրակիր սարքերի միջոցով ստուգելու տրանսպորտային միջոցների աղմուկի մակարդակը:

Նախարարության հաղորդմամբ՝ կարգն ուժի մեջ կմտնի ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից: Ոստիկաններն աղմուկի մակարդակը կստուգեն հենց ճանապարհային երթեւեկության ընթացքում: Այդ նպատակով արդեն ձեռք են բերվել միջազգային ստանդարտներին համապատասխան հատուկ սարքավորումներ:

Ավտոմեքենաների եւ այլ տրանսպորտային միջոցների աղմուկի թույլատրելի նորմերը կարգավորվում են Վրաստանի կառավարության որոշմամբ:

Ժամը 23:00-ից մինչեւ 08:00-ն ընկած ժամանակահատվածում բնակավայրերում տրանսպորտի աղմուկը չպետք է գերազանցի 80 դեցիբելը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն՝ սահմանված նորմի խախտումը կհանգեցնի վարորդների տուգանման եւ վարորդական իրավունքի վկայականի միավորների նվազեցման. Առաջին դեպք՝ 100 լարի տուգանք եւ վարորդական վկայականից 10 միավորի նվազեցում: Երկրորդ դեպք՝ 200 լարի տուգանք եւ 20 միավորի նվազեցում: Երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ դեպք՝ 300 լարի տուգանք եւ 30 միավորի նվազեցում:

Ներքին գործերի նախարարությունից հայտնել են, որ ակտիվ ռեժիմով կշարունակեն ճանապարհային երթեւեկության կառավարումն ու նմանատիպ խախտումներին արձագանքումը:

Հիշեցնենք, որ 2026 թվականի հունվարի 1-ից երկրում պետք է ուժի մեջ մտնեին ավտոմեքենաների աղմուկի դեմ նոր կանոնակարգերը, սակայն աղմուկը չափող սարքերի ձեռքբերման մրցույթի քանիցս ձախողման պատճառով ժամկետը հետաձգվել էր:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Չպարտվող, անհաղթ: 6.Հայ պատմահայր Խորենացու պատումներից «... եւ Բել»: 9.«Հետեւը ..., առաջը ջուր, Սուգ, վայնասուն, իրարանցում» (Հովհ.Թումանյան «Թագավորն ու չարչին»): 11.Հայաստանի ազգային պետական նվագարանների նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր ... Դավթյան: 12.Հայերիս պաշտելի լեռը, Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր կետը: 14.Օժանդակ բայ: 15.«... շունը կծող չի լինում» (հայկական ասացվածք): 16.Համադասական շաղկապ: 17.Հայտնի գյուղ Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության Բեդայի շրջանում: 19.Խոտաբույսի տեսակ: 20.«Զարկեցեք, դարբիններ կռանը ...ին» (Հովհաննես Հովհաննիսյանի «Արտավազդ» բանաստեղծությունից): 21.Եգիպտոսի մայրաքաղաքը: 23.Քաջ, անվախ: 24.Պակաս, նվազ: 25.Ավազաշատ տարածություն: 29.Վաթսուն վայրկյան: 30.Վրացական ջազ եւ փոփ երգչուհի, հաղորդավարուհի ... Սոխաձե: 32.Բելգիացի կինոդերասան եւ մարտարվեստի վարպետ Ժան- ... վան Դամ: 34.Թշնամանք, ոխ, չարություն, զոխ (բրբ.): 35.Առարկա: 37.Հողի չափման միավոր: 38.Սահմանադրական դատարանի կամ արդարադատություն իրականացնող անձ, ներկայացուցիչ: 40.Իր դատարանով հայտնի քաղաք Նիդերլանդներում: 42.Գետ ՌԴ-ում: 44.Հրանտ Մաթեւոսյանի պատմվածքներից: 46.Անորոշ դերանուն: 47.Ցուցական դերանուն: 48.Գործարան Երեւանում: 49.Չայնարկություն: 50.Նորվեգացի հեքիաթագիր Անդերսենի անունը: 52.«... խոսք ունիմ իլթիմազով» (Սայաթ-Նովա): 53.Ֆրանսիացի երգահան ժորժ Բիզեի օպերան: 55.Հայ մեծ գրող Նար-Դոսի վիպակներից «... Սարոյան»: 56.Թատերական գործողություն: 57.Դաշնակ Դրաստամատ Կանայանի կեղծանունը: 58.Հռոմի Պապ ... 14-րդ: 59.Կինոյի եւ թատրոնի հանրահայտ դերասան, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ ... Ալեքսանյան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ծաղկի տեսակ: 3.«...դ հուզին թող լճակ» (Պետրոս Դուրյան «Լճակ»): 4.Երանաշնորհ, երանի տալու արժանի: 5.Անգլիացի հանրահռչակ ֆիզիկոս Նյուտոնի անունը: 6.Հայտնի հաղորդավարուհի ... Ութմազյան: 7.Ոսկու չափման հնացած միավոր: 8.Տնտեսությունը վարող: 10.Ուրանանք, ..., ուրանան: 13.Իտալացի շատ հայտնի ֆիզիկոս եւ մաթեմատիկոս: 14.Պարույր Սեւակի բանաստեղծություններից «Դու ...»: 18.5-րդ դարի առասպելներից «Հայկ եւ ...»: 20.Ոչնչացնող ծաղր: 22.Հայ մեծ առակագիր Խնկո ...: 26.Շատ զզվելի, գարշելի: 27.«Ա՜յ, ... կենդանի, Ով քեզ նման վիզ ունի» (Աբաբեկ Խնկոյան «Խոզն ու ագռավը»): 28.Սարում ապրող, յայլավոր: 31.Նիշ, չափ: 33.Վրացի մեծ գրող: 36.«Իսկ մանկան ... թափ առավ, գնաց» (Պ.Սեւակ «Անլռելի զանգակատուն»): 37.Շատ վախեցնել, ահ տալ: 38.Ցուցական դերանուն: 39.Կեռման, պտտվող ճանապարհ: 41.Ամերիկացի գրող Դանիել ...: 43.Կրծող կենդանի: 45.Կցվել, գումարվել: 50.Ճար, միջոց, դարման: 51.Դաղձ, անանուխ: 52.Արեգակնային համակարգի մոլորակ: 54.Հոգնակիակերտ մասնիկ: 57.Մուլտիպլիկացիոն ֆիլմ «..., սպասիր»:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Նջամենա: 7.Քենակալ: 9.Կոկտեյլ: 10.Ոգեշունչ: 13.Րոպեներ: 16.Տարա: 18.Նինա: 20.Ամեոբա: 23.Ալվան: 25.Մուգ: 27.Դարան: 28.Կեմենի: 29.Տկլոր: 31.Գեշ: 32.Կուտի: 35.Վոլոստ: 36.Լուրթ: 37.Ոսկի: 38.Համ: 41.Ազոխ: 43.Մակետ: 46.Բնիկ: 47.Ֆուձիյամա: 48.Ամիր: 49.Տիպիկ: 50.Թան: 51.Լիզ: 52.Սաստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անկապ: 3.Եղեռն: 4.Աքլոր: 5.Անգետ: 6.Շլաչ: 8.Կյուրի: 9.Կարկանդակ: 11.Շանթ: 12.Նան: 14.Եոն: 15.Եռալ: 17.Իսակով: 19.Արգիշտի: 21.Եփրատ: 22.Բանտ: 24.Ներողամիտ: 25.Մեգով: 26.Ունես: 30.Կարտոֆիլ: 33.Ութսունութ: 34.Իլիական: 39.Մայիս: 40.Դեմիս: 42.Խուրի: 44.Կապա: 45.Տակտ:

Գլխավոր խմբագիր, տնօրեն՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՑՕ ՅՈՒՍՅԱՓՈՒՆ: ՈՅՕԼՈՆՕՆ 0105, Գ.ԱՓՈՎՅԵԼՈՆ ՀՂՒՀ 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«Տորի» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ՈՅՕԼՈՆՕՆ, ՆԱՀԱՐԱՊՅԵԼՈՎ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445

Պարբերականում օգտագործվել են վրացական, հայաստանյան, օտարերկրյա մամուլի, ինչպես նաեւ տեղեկատվական գործակալությունների եւ համացանցկայքերի նյութերը: Խմբագրության դիրքորոշումը կարող է չհամընկնել հեղինակների կարծիքի հետ: